

ՌՈՒՉԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գավառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական փաստաբանների քեկնաժու, դոցենտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳՈՒՄ**

Սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, որի կիրառման կառուցակարգում անփոխարինելի դերակատարություն ունի սահմանադրական արդարադատության մարմինը: Սահմանադրական արդարադատությունը հետխորհրդային տարածքում ձևավորված նորանկախ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բնութագրի անօտարելի մասն է կազմում: ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածն ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»: Այսպիսով, պետության Հիմնական օրենքը նախատեսում է սահմանադրական դատարանի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ սահմանադրական արդարադատության իրականացման առումով: Հատկանշական է, որ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ ՄԳ) մի կողմից սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է և ինքն է կրում պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ մյուս կողմից՝ սահմանադրական պատասխանատվության առյան է՝ Հանրապետության Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ Նախագահի քեկնաժուների, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության քեկնաժուների, կուսակցությունների համար: ՄԳ-ի բնութագրման համար ելակետային է այն, որ վերջինս սահմանադրական արդարադատության միջոցով իրականացնում է սահմանադրական վերահսկողություն՝ որպես պետաիշխանական գործունեության ինքնուրույն ուղղություն: Գ. Գ. Հարությունյանի բանաձևմամբ՝ «Սահմանադրական վերահսկողությունը հասարակության կենսագոյի համընդհանուր ճանաչում գտած ու հաստա-

տագրված կանոնների պահպանության երաշխիքն է»²: Ժողովրդավարական պետության սահմանադրական արժեքների պաշտպանական համակարգի առանցքը սահմանադրական վերահսկողության և արդարադատության հետ միասին կազմում է վերջիններիս հետ օրգանապես փոխկապված սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, որը խիստ կարևորվում է երկրում սահմանադրականության ռեժիմի հաստատման առումով:

Սահմանադրականությունը՝ որպես Սահմանադրության և ընդհանրապես սահմանադրական իրավունքի գործնական իրացում, ներառում է սահմանադրական դատարանի գործունեությունը³: Եվ որպեսզի ՄԳ-ը դառնա սահմանադրականության հաստատման համար անհրաժեշտ ինստիտուտ և կարողանա իր գործունեությամբ նպաստել երկրում սահմանադրականության միջավայրի ստեղծմանը, պետք է կրի լուրջ սահմանադրական պատասխանատվություն: Սահմանադրական պատասխանատվության կիրառման համար անհրաժեշտ սահմանադրական իրավախախտման փաստը կարող է արձանագրել ՄԳ-ը: Եթե սահմանադրական իրավախախտմամբ պատճառվում է վնաս, ապա սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը ներառում է նաև պատճառահետևանքային կապը սուբյեկտի վարքագծի ու հետևանքի՝ պատճառված վնասի միջև: Բարդություններ են առաջանում այն դեպքում, երբ պետք է ապացուցել սահմանադրական նորմի խախտման հետևանքով վնասի պատճառումը: Սահմանադրական պատասխանատվության դատավարական ձևի շրջանակում բարդ է ապացույցների հավաքումը, ստուգումը, վերլուծությունը և գնահատումը: Նման իրավիճակից ելք գտնելու համար շատ կրկրներում ստեղծել են հատուկ մարմիններ, որոնք քննում են սահմանադրական իրավախախտումների հետ կապ-

ված գործերը: Այդ մարմիններն ունեն ապացույցների հավաքման և գնահատման համար անհրաժեշտ իրավասություններ. օրինակ՝ իրավունք ունեն ստուգելու փաստաթղթեր, միջնորդություններ, ծառայողական գրություններ, կանչերս վկաներին, պետական մարմիններից պահանջելու անհրաժեշտ նյութեր, տեղեկանքներ, բացատրություններ: Լեհաստանում այդպիսի մարմին է Պետական Տրիբունալը, որն էական նշանակություն ունի սահմանադրաիրավական սանկցիաների կիրառման մեխանիզմում: Իսկ մեր երկրում նման իրավունքներով օժտված է ՄԳ-ը: Հայաստանի Հանրապետությունում ՄԳ-ը սահմանադրական իրավահարաբերությունների կարևոր սուբյեկտներից է, պետական իշխանության մարմինների նկատմամբ սահմանադրական պատասխանատվության միջոցներ կիրառող կամ այդ միջոցների կիրառման ընթացակարգում հանգուցային դեր ունեցող ինստիտուտ, սահմանադրական վերահսկողություն իրականացնող, ինչպես նաև սահմանադրական պատասխանատվություն կրող մարմին: Այսինքն՝ ՄԳ-ը իր սահմանադրաիրավական կարգավիճակով՝

- 1) սահմանադրական պատասխանատվություն կիրառող ատյան է,
- 2) պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն կրող մարմին,
- 3) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացում Լական դեր ունեցող ինստիտուտ.

4) համապատասխան հիմքերի առկայության դեպքում ՄԳ-ի անդամների նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության կիրառմանը նպաստող մարմին:

Հայաստանի Հանրապետությունում ՄԳ-ի սահմանադրական պատասխանատվության նորմատիվ հիմքերն են Սահմանադրությունը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է ՄԳ-ի լիազորությունները և դրանով իսկ անուղղակիորեն սահմանում ՄԳ-ի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ լիազորությունների իրականացման համար:

Օրենքում (67-րդ հոդված) որպես նորոյթ նախատեսված է, որ ՄԳ-ը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ:

Այն ուղարկում է պետական ու տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ, ինչը, կարծում ենք, միտված է վերջիններիս պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության բարձրացմանը, սահմանադրական արդարադատության արդյունավետության ու հրապարակայնության ապահովմանը: Օրենքով հստակեցվել է ՄԳ-ի գործունեության կարգը, նախատեսվել են տարբեր գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, ամրագրվել է գործի հանգամանքների ի պաշտոնն պարզման սկզբունքը, կողմերի համար ապահովվել է սահմանադրական իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության երաշխիք, մատչելի է դարձել սահմանադրական արդարադատությունը:

Հատկանշական է, որ ՄԳ-ի որոշումները պարտադիր են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Բոլոր իրավագոր սուբյեկտների կողմից ՄԳ-ի որոշումների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են լուրջ նախադրյալներ, կենսագործման մեխանիզմներ: Սակայն իրականությունն այն է, որ հաճախ բազմաթիվ պահանջներ, անգամ օրենսդրական նորմեր մնում են անկատար՝ իրականացման նորմատիվ, ֆինանսական, կազմակերպական և այլ հիմքերի բացակայության կամ անբավարարության պատճառով: Մասնավորապես, Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետները խախտելու դեպքում սահմանադրական դատարանն այդ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կարող է նշանակել օրենքով սահմանված պատասխանատվության միջոց :

Պատասխանատվության միջոցի նշանակումը չի ազատում սահմանադրական դատարանի պահանջների կատարումից:

Սույն մասում նշված գործողությունների կամ անգործության համար ֆիզիկական անձինք կամ իրավաբանական անձի դեկավարը կարող են տուգանվել՝ օրենքով սահմանված չափով:

4. Պատասխանատվության միջոց նշա-

նակվելուց հետո սահմանադրական դատարանի պահանջները վերստին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խուսափելը կամ կատարման ժամկետները խախտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն»:

Համաձայն ենք ՄԳ-ի տարեկան հաղորդման մեջ տեղ գտած այն մտահոգության հետ, որ սույն հոդվածի պահանջները ձեռնարկում են կրում, որովհետև Օրենքում նշված պատասխանատվության միջոցները դեռևս սահմանված չեն: Կամ՝ Օրենքի 66-րդ հոդվածը նախատեսում է ՄԳ-ի որոշումը չկատարելու հետևանքները՝ սահմանելով, որ «Սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»: Այս նորմը նույնպես դեկլարատիվ բնույթ է կրում, քանի որ նյութական և դատավարական իրավունքի նորմերով որոշակիացված չէ: Նշված ձևակերպումները ենթադրում են լրացումներ ու փոփոխություններ Հայաստանի Հանրապետության քրեական, վարչական իրավաստումների վերաբերյալ օրենսգրքերում, այլ նորմատիվ իրավական ակտերում: Այսուհանդերձ, ՄԳ-ը կարևոր դերակատարություն ունի սահմանադրական պատասխանատվության կիրառման կառուցակարգում: Ընդ որում, մի կողմից ՄԳ-ը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության կոդեքսի սուբյեկտ է, մյուս կողմից՝ ՄԳ-ի յուրաքանչյուր անդամ նշանակման պահից կրում է անհատական պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում կարող է վերածվել նեգատիվ սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի:

Օրենքի 3-րդ հոդվածը բովանդակում է ՄԳ-ի անդամին ներկայացվող պահանջները և, բացի տարիքային, քաղաքացիության, կրթական, լեզվական և այլ ցենզերից, 2-րդ մասում նախատեսում է, որ «Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահը պետք է հաշվի առնեն նաև սահմանադրական դատարանի անդամի քննաժողովի քարոշական հատկանիշները»: Օրենքի այս իմպերատիվ պահանջը պայմանավորված է ՄԳ-ի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակով, նրա կարևոր առաքելությամբ:

ՀՀ ՄԳ-ի անդամը ենթակա է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝

գործունեության անհամատեղելիության մասին Սահմանադրության և օրենքի պահանջները խախտելու համար, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, որը չպետք է խոչընդոտի ՄԳ-ի անդամի լիազորությունների իրականացմանը և չի կարող հարգելի պատճառ համարվել ՄԳ-ի նիստերից բացակայելու համար:

Սահմանադրական նշված դրույթները խախտելու դեպքում ՄԳ-ի անդամը կվերածվի սահմանադրական իրավաստման սուբյեկտի և սահմանված կարգով կենթարկվի նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝ պաշտոնազրկման ձևով: Իսկ ՄԳ-ի անդամն իր սահմանադրաիրավական կարգավիճակից բխող պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը ստանձնում է պաշտոնի հետ մեկտեղ՝ Ազգային ժողովի նիստում Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև տրված ելույթում՝ ապահովել Սահմանադրության գերակայությունը, լինել անուշառ, հավատարիմ մնալ ՄԳ-ի անդամի կոչմանը (Օրենքի 4-րդ հոդված):

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ի անդամն անփոփոխելի է, սակայն դա չի նշանակում, որ «անպատասխանատու» է: ՄԳ-ի անդամը պատասխանատվություն է կրում մի կողմից իրեն նշանակող մարմնի, մյուս կողմից՝ ՄԳ-ի առջև՝ Սահմանադրության և օրենքների պահպանման, իր լիազորությունների պատշաճ կատարման համար: Այսինքն՝ ՄԳ-ի անդամի նկատմամբ սահմանադրական պատասխանատվության առյուծ կշիռն էն նրան նշանակող մարմինները՝ Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը: Իսկ ՄԳ-ը մասնակցում է իր անդամին նեգատիվ սահմանադրական և այլ իրավաբանական (վարչական կամ քրեական) պատասխանատվության ենթարկելու գործընթացին՝ եզրակացություն տալով՝

- նրա լիազորությունները դադարեցնելու,

- նրան կալանավորելու,

- որպես մեղադրյալ ներգրավելու,

- նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ ՄԳ-ը սահմանադրաիրավական սանկցիաներ է կիրառում իրեն ոչ ենթակա և հաշվառու՝ պետական իշխանության մարմինների նկատմամբ, ընդ որում, կիրառում է սահմանադրական պատասխանատվության ոչ բոլոր, այլ միայն իրեն

բնորոշ միջոցները: ՄԳ-ի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված ակտերը կորցնում են իրավաբանական ուժը, իսկ նախնական սահմանադրական վերահսկողության դեպքում՝ ընդհանրապես ուժի մեջ չեն մտնում, չեն կիրառվում:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է սահմանադրական պատասխանատվության միջոցներ, իսկ Օրենքն ամրագրում է սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման մեխանիզմը: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ը՝ որպես սահմանադրական վերահսկողության մարմին, պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝

- որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը,

- անհատապատկան կամ վերացած ճանաչելու Հանրապետության Նախագահի քննաժողովի համար առաջացած խոչընդոտները,

- օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնելու կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Նշված բոլոր հարցերի վերաբերյալ ՄԳ-ը ընդունում է որոշումներ, իսկ կարակացություններ տալիս է՝

- Հանրապետության Նախագահին պաշտոնաթուղի անելու հիմքերի առկայության մասին,

- Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարիւնության մասին,

- ՄԳ-ի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ,

- համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին:

ՄԳ-ը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում միջազգային պայմանագրերի նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողություն իրականացնելու, այսինքն՝ մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը դրանցում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար: Օրինակ ՀՀ ՄԳ-ը «2004 թ. մայիսի 13-ին Ստրասբուրգում ստորագրված

Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վերահսկողության համակարգը փոփոխող և լրացնող թիվ 14 Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով որոշեց, որ Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

ՄԳ-ը նաև պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ լուծելու.

- հանրաքվեների արդյունքների,
- Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների,

- պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ը գործերը քննում և դրանց վերաբերյալ որոշումներն ու եզրակացություններն ընդունում է կոլեգիալ: Եվ որպես կոլեգիալ մարմին՝ ՄԳ-ը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս պահպանելու գործի քննության Օրենքով սահմանված սկզբունքները:

Իր հերթին պետությունը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ ապահովելու ՄԳ-ի բնականոն գործունեությունը հետևյալ ուղղություններով.

- ՄԳ-ի ֆինանսավորում պետական բյուջեի միջոցների հաշվին,
- չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով ՄԳ-ի պահուստային ֆոնդի նախատեսում,
- առանձին շենքի և անհրաժեշտ գույքի հատկացում,

- օրենքով սահմանված կարգով ՄԳ-ի զբաղեցրած շենքերի, շինությունների անվտանգության ապահովում,

- ՄԳ-ի անդամի, նրա բնտանիքի անդամների, նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության կամ ներգործության սպառնալիքի դեպքում ՄԳ-ի պահանջով իրավասու պետական մարմիններին պարտավորեցում՝ անհապաղ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները ՄԳ-ի անդամի, նրա ընտանքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի ու ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու

ուղղությամբ (Օրենքի 6-րդ հոդված),

- ՄԳ-ի անդամի համար կյանքի և աշխատանքի արժանավայել պայմանների, գործունեության սոցիալական երաշխիքների ապահովում (Օրենքի 12-րդ հոդված):

ՄԳ-ի նախագահը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում դատարանի բնականոն գործունեությունն անմիջականորեն ապահովելու, ՄԳ գործունեությունը կազմակերպելու և ղեկավարելու համար:

ՄԳ-ի անդամն իրավունք չունի լինելու կուսակցության անդամ, զբաղվելու քաղաքական գործունեությամբ: Ընդհանրապես, սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական արդարադատություն իրականացնող ատյանները քաղաքական մարմին չեն և չպետք է մասնակցեն քաղաքական գործընթացներին, թեև նրանց ընդունած ակտերը հաճախ ունենում են քաղաքական հետևանքներ¹⁰:

Որպես սահմանադրական պատասխանատվություն կրող սուբյեկտ՝ ՄԳ-ի նախագահն ու անդամներն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանն ու օրենքներին: Օրենքը նախատեսում է, որ ՄԳ-ի անդամի գործունեության կապակցությամբ նրա նկատմամբ որևէ ներգործություն անթույլատրելի է և հետապնդվում է օրենքով: Մի կողմից՝ Օրենքն ամրագրում է, որ ՄԳ-ի անդամն իրավունք չունի իր գործունեության կապակցությամբ հայցելու կամ ստանալու որևէ ցուցում, մյուս կողմից՝ սահմանում է, որ ՄԳ-ի անդամի գործունեության միջամտության կամ նրա նկատմամբ այլ ներգործության յուրաքանչյուր փաստի մասին ՄԳ-ի անդամն անհապաղ իրազեկում է ՄԳ-ին, որն իր որոշմամբ կարող է իրավասու մարմիններից պահանջել անհապաղ պատասխանատվության ենթարկել միջամտություն թույլ տված և (կամ) այն կազմակերպած անձին: Չի բացառվում, որ միջամտություն թույլ տված կամ այն կազմակերպած սուբյեկտը ենթարկվի նեգատիվ սահմանադրական պատասխանատվության:

ՄԳ-ի անդամը ոչ միայն անփոփոխելի, այլև անձեռնմխելի է: Նա չի կարող հետապնդվել ու պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Անձեռնմխելիության սկզբունքի համաձայն՝ նա չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու հարց հարուցվել՝ առանց ՄԳ-ի ու նշանակող

մարմնի՝ Ազգային ժողովի կամ Հանրապետության Նախագահի համաձայնության: ՄԳ-ի համաձայնությունը արվում է եզրակացությամբ, Ազգային ժողովի համաձայնությունը՝ որոշմամբ, իսկ Հանրապետության Նախագահի համաձայնությունը՝ հրամանագրով: Նրշված ակտերի բնդունմամբ իրավասու ատյանները ՄԳ-ի անդամի նկատմամբ արդեն իսկ կիրառում են նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն՝ վերջինիս գրկելով անձեռնմխելիության իրավունքից և նրան իրավաբանական պատասխանատվության այլ տեսակների (վարչական, քրեական) ենթարկելու հնարավորություն տալով:

ՄԳ-ի անդամի լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Տարիքը (65 տարին, իսկ մինչև 2005 թ. սահմանադրական բարեփոխումների՝ ՄԳ-ի գործող անդամների համար՝ 70 տարին) լրանալու կամ հրաժարականի հիմքով ՄԳ-ի անդամի լիազորությունների դադարումը նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց չէ: Գտնում ենք, որ ՄԳ-ի անդամի լիազորությունների դադարեցումը կարելի է գնահատել որպես սահմանադրաիրավական սանկցիա՝ հետևյալ հիմքերով.

1) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,

2) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց պարտականությունների կատարման հետ չկապված պաշտոն զբաղեցնելը,

3) առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելը,

4) այլ վճարովի աշխատանք կատարելը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

5) որևէ կուսակցության անդամ լինելը,

6) քաղաքական գործունեությամբ զբաղվելը,

7) հանցագործություն կատարելը և նրա նկատմամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը,

8) պաշտոնում օրենքի խախտմամբ նշանակվելը, ինչն ապացուցվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով,

9) ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը,

10) մեկ տարվա ընթացքում երեք օր անհարգելի պատճառով ՄԳ-ի նիստերին չմաս-

նակցելը.

11) ՄԳ-ում քննվելիք գործի վերաբերյալ նախապես կարծիք հայտնելը կամ այլ գործողություններով իր անաչառությունը կասկածի տակ դնելը, կամ դժգուհակ խորհրդակցության ընթացքի մասին տեղեկություններ հայտնելը, կամ այլ կերպ ՄԳ-ի անդամի իր երդումը դրժելը:

ՄԳ դիմելու պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն կրում են Սահմանադրությամբ նախատեսված հետևյալ սուբյեկտները, Հանրապետության Նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ պատգամավորների անվագն մեկ հինգերորդը (նախկին՝ մեկ երրորդի վոյսարեն), ՀՀ կառավարությունը, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները, մարդու իրավունքների պաշտպանը, Հանրապետության Նախագահի թեկնածուները, պատգամավորության թեկնածուները, դատարանները, գլխավոր դատախազը, յուրաքանչյուր ուր, ինչպես նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան:

Սահմանադրական պատասխանատվությանը (ավելի ստույգ՝ սահմանադրական պատասխանատվության շարժընթացին և սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառմանը) քննող ևն օրենսդրությամբ սահմանված որոշակի դատավարական ձևեր: Սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառումը իրավախախտի նկատմամբ իրականացվում է սահմանադրական-դատավարական նորմերին համապատասխան, որոշակի կարգով: Օրենքը սահմանում է ՄԳ-ում գործի քննության կարգը (դիմումի նախնական քննարկումը, գործը քննության ընդունելը, գործի քննությունը մերժելը): Որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին՝ ՄԳ-ը որոշում է վիճարկվող նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը և դիմումի ապահովման նպատակով իր որոշմամբ կարող է գործը քննության ընդունելուց հետո, դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, մինչև գործի դատաքննության ավարտը կասեցնել այն իրավական ակտի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների դիմող կողմի կամ հանրության համար: Որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ՝ Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն ՄԳ-ը իրավունք ունի պահանջներ

ներկայացնելու: Այսպես, ՄԳ-ը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ նաև վերջինիս կողմից որպես սովորական գործով զեկուցող նշանակված ՄԳ-ի անդամը (անդամները) ՄԳ-ի նախագահի գիտությամբ իրավասու է (են) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, ևզրակացություններ և այլ նյութեր, հանձնարարելու կատարել ստուգումներ, փորձաքննություններ, հետազոտություններ, իսկ ֆիզիկական ու իրավաբանական անձանցից՝ պահանջելու նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

Նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության որոշման գործերով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվում է վիճարկվող ակտն ընդունված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը:

Գործի քննության արդյունքում ՄԳ-ը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

- 1) վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,
- 2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Վերջին որոշման ընդունման փաստը կարող ենք գնահատել որպես ՄԳ-ի կողմից նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոցի կիրառում ակտն ընդունված մարմնի նկատմամբ: Օրինակ՝ ՀՀ ՄԳ-ը թիվ 649 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց «Սոցիալական ապահովության բարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները ևս կորցրին իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու, այսինքն՝ հրապարակման պահից՝:

Նորմատիվ ակտի սահմանադրականությունը գնահատելիս՝ ՄԳ-ը ոչ միայն ստուգում է դրա ընդունման ընթացակարգը, ստորագրման, հրապարակման, ուժի մեջ մտնելու կարգի տեսանկյունից, այլ, նախ, նրա բովանդակության, ինչպես նաև իշխանությունների բաժանման, իրավասության տեսանկյուն

նից, այսինքն՝ իրականացվում է սահմանադրական վերահսկողություն թե՛ ըստ բովանդակության և թե՛ ըստ ձևի:

Դրական ենք գնահատում այն փաստը, որ ՄԳ դիմող սուբյեկտների շրջանակն ընդլայնվել է, և այդպիսի իրավունք է ստացել մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում բվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Այդպիսով, ստեղծվել է սահմանադրական արդարադատության մարմնում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, դրանց խախտումների և հակաիրավական սահմանափակումների կանխման կարևոր երաշխիք և լուրջ քայլ է կատարվել միասնական եվրոպական իրավական տարածք ինտեգրվելու ճանապարհին¹: ՄԳ դիմելու իրավունք ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով: Նրանց իրավունք է վերապահվել նախաձեռնել պետական մարմինների ընդունած ակտերը հակասահմանադրական ճանաչելու և այդպիսով պետական մարմինների նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառելու գործընթացը: Նշված գործերով դիմումները ՄԳ կարող են ներկայացվել այն պահից սկսած, երբ տեղական ինքնակառավարման մարմինը իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր իրավունքների խախտման կամ դրանց խախտման իրական հնարավորության մասին, քայց ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո:

Կարծում ենք, մեկ տարվա սահմանափակումն այդքան էլ ճիշտ չէ և տեղական ինքնակառավարման մարմինն գրկում է իր սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելու հնարավորությունից: Նույն տրամաբանությամբ ցանկացած օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունումից մեկ տարի հետո այլևս չի կարող վիճարկվել ՄԳ-ում:

Շատ հաճախ նորմատիվ իրավական ակտերի բովանդակած դրույթների հակասական, վիճելի բնույթն ի հայտ է գալիս հենց դրանց կիրառման ընթացքում, որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորելիս, կոնկրետ գործեր լուծելիս, դատարան-

ների և իրավապահ մարմինների աշխատանքում: Այս տեսանկյունից, կարծում ենք, ճիշտ էր դատարաններին և գլխավոր դատախազին ՀՀ ՄԳ դիմելու իրավունք վերապահելը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով: Այս դեպքում ՄԳ-ը իրականացնում է իրավական նորմերի կոնկրետ վերահսկողություն:

ՀՀ ՄԳ-ը կարևոր դերակատարությունն ունի Հանրապետության Նախագահի նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառելու գործընթացում: Թեև Հանրապետության Նախագահի նկատմամբ սահմանադրական պատասխանատվության առկայությունն է ՀՀ Ազգային ժողովը, սակայն օրենսդիր մարմինը չի կարող իրականացնել իր այդ լիազորությունը՝ առանց ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին ՄԳ-ի եզրակացության: Եթե ՄԳ-ի եզրակացությունը բացասական է, ապա հարցը հանվում է ՀՀ Ազգային ժողովի քննարկումից: Օրենքի 76-րդ հոդվածը նախատեսում է Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին կարակացություն տալու վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները: Նշված գործերով ՀՀ Ազգային ժողովն իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության Նախագահի այն որոշումը, գործողությունը կամ անգործությունը, որի ընդունումը կամ իրականացումն իր մեջ պարունակում է պետական դավաճանության կամ քրեական օրենսգրքով նախատեսված այլ ծանր հանցագործության² հատկանիշներ: Նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը: Սահմանադրական դատավարությանը որպես դատավարության մասնակից պետք է ներգրավվի Հանրապետության Նախագահը, որն օգտվում է դատավարության կողմի իրավունքներից և կրում նրա պարտականություններն այնքանով, որքանով դա չի կարող վնաս պատճառել իր իրավունքներին ու ազատություններին: Հանրապետության Նախագահի չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար: Նշված գործերի վարույթը չի կարող կարճվել Հանրապետության Նախագահի հրաժարականի կամ այլ հիմքով նրա լիազորությունների դադարեցման դեպքերում:

Հարց է ծագում՝ ինչպես կարող է ՄԳ-ը կարակացություն տալ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, եթե ըստ ՀՀ Սահմանա-

դրության 57-րդ հոդվածի՝ այդպիսի հիմք են պետական դավաճանության կամ այլ ծանր (առանձնապես ծանր) հանցագործության կատարման փաստը: Այդ առումով Օրենքը նախատեսում է, որ գործը դատաքնության նախապատրաստելիս ՍԴ-ը կարող է ձևավորել նախաքնության մարմնի՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված հատուկ հանձնախումբ, որում ընդգրկում է վճռաբեկ դատարանի պալատներից մեկի նախագահին (որպես հանձնախմբի ղեկավար) և վճռաբեկ դատարանի երկու դատավորների: Ներկայացված ապացույցները նմանապես են հետազոտման ՍԴ-ի կողմից՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Հատուկ հանձնախմբի ձևավորումը պարտադիր է, եթե դիմող կողմը կամ Հանրապետության Նախագահը միջնորդել է դրա համար: Նշված գործերի քննության ընթացքում ՍԴ-ը կամ հատուկ հանձնախումբը, մասնավորապես, իրավասու է՝

1) դատական, դատախազական, քրեչափական, այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել նյութեր, քրեական, քաղաքացիական, վարչական գործեր, դատավճիռներ, վճիռներ, որոշումներ, փորձագիտական եզրակացություններ, տեղեկանքներ և այլ նյութեր,

2) հրավիրել և լսել այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով կայացվելիք եզրակացության համար:

Դատական նիստի բացվելուց հետո Ազգային ժողովի ներկայացուցիչը (ներկայացուցիչները) ներկայացնում է (են) դիմողի դիրքորոշումը, որից հետո ներկայացված փաստերի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնում Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչը: Դրանից հետո կատարվում է ապացույցների հետազոտում: Նիստի վերջում եզրափակիչ խոսքով հանդես է գալիս դիմող կողմը, որը կարող է պնդել իր դիմումը կամ հրաժարվել դրանից, և Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչը, որին (որոնց) տրամադրվում է պաշտպանությանը հանդես գալու հնարավորություն: Այնուհետև ՍԴ-ը լսում է տվյալ գործով ձևավորված հանձնախմբի դիրքորոշումը: Հանրապետության Նախագահի և (կամ) նրա ներկայացուցիչն ունեն վերջին ելույթի իրավունք: Այդ ելույթից հետո ՍԴ-ը կարող է օրենքով նախատեսված կարգով որոշում կայացնել գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ այդպիսի որոշում չկայացվելու դեպքում նիստի նախագահ

հողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին: Եթե գործի դատաքնության ժամանակ դիմող կողմը հրաժարվում է դիմումից, և Հանրապետության Նախագահը և որոշյա ժամկետում չի առարկում դրա դեմ, ապա գործի վարույթը ենթակա է կարճման: Իսկ գործի քննության արդյունքում ՍԴ-ի կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

1) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին (դրանով իսկ դադարեցնելով Ազգային ժողովի կողմից Հանրապետության Նախագահի նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության կիրառման գործընթացը),

2) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին (այդպիսով՝ օրենսդիր մարմնին հնարավորություն տալով Հանրապետության Նախագահի նկատմամբ կիրառելու նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց):

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացության մեջ ՍԴ-ի պետք է նշի՝

1) Հանրապետության Նախագահի այն որոշումը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են ծանր (առանձնապես ծանր) հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության ճշգրիտ որակումը,

2) Հանրապետության Նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և սահմանադրական դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց հետազոտման վերաբերյալ:

Եզրակացությունն ընդունվելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը, այն ուղարկվում է Ազգային ժողով և հայտարարվում հանրային հեռուստատեսությամբ:

Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացություն ստանալու համար ՍԴ-ին դիմում է կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին տեղեկություններին իրագրել դառնալուց ոչ ուշ, քան 5 օր հետո:

Կարծում ենք, որ այս հարցով ՍԴ դիմելու իրավունք պետք է ունենա ոչ թե ՀՀ կառավարությունը, այլ պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ ՀՀ Ազգային ժողովը:

ՍԴ-ը լուրջ դերակատարություն ունի

նաև համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու գործընթացում, քանի որ եզրակացություն է տալիս վերջինիս պաշտոնանկության հիմքերի մասին: Համայնքի ղեկավարի նկատմամբ սահմանադրական պատասխանատվության առյան և ՀՀ կառավարությունը, որը 2005 թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո կարող է պաշտոնանկության ձևով նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառել միայն ՄԳ-ի եզրակացության հիման վրա: Այսպիսով, ստեղծվել է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի սահմանադրական պաշտպանության լուրջ երաշխիք:

ՄԳ-ը կուսակցությունների նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն կիրառող առյանն է: Կուսակցությունների գործունեության արգելման հարցով Հանրապետության Նախագահը դիմում է ՄԳ: Կուսակցությունների այն անդամները, ովքեր Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, ենթակա են նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝ իրենց ծառայողական (պաշտոնական) դիրքը հոգուտ կուսակցական շահերի օգտագործելու դեպքում: ՄԳ-ը կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին որոշում կարող է ընդունել նրա գործունեության մեջ Սահմանադրության կամ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման հատկանիշներ բացահայտելու դեպքում: Այն կուսակցությունը, որի գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ դիմում է ներկայացվել, սահմանադրական դատավարությունում ներգրավվում է որպես դատավարության մասնակից և օգտվում է դատավարության կողմի իրավունքներից ու կրում նրա պարտականությունները: Գործի քննության արդյունքում ՄԳ-ը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) դիմումը մերժելու մասին.

2) կուսակցության գործունեությունը որոշակի ժամկետով կասեցնելու մասին, և կարող է այդ ժամկետում կուսակցության վրա դնել կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները վերացնելու պարտականություններ.

3) կուսակցության գործունեությունն արգելելու, այսինքն՝ կուսակցության նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառելու մասին:

ՄԳ-ը նորմատիվ իրավական ակտերի

նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնելիս կամ կուսակցության գործունեությունը կասեցնելու, կամ արգելելու մասին որոշում կայացնելիս հանդես է գալիս որպես սահմանադրական պատասխանատվության առյան, իսկ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության (որպես սահմանադրական պատասխանատվության առյանների) կողմից Հանրապետության Նախագահի, համայնքի ղեկավարի (որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտների) նկատմամբ սահմանադրաիրավական սանկցիաներ կիրառելու մեխանիզմում ունենում է վճռական դերակատարություն՝ տալով եզրակացություն:

Կարևոր նշանակություն ունեն նաև ՄԳ-ի որոշումները՝ Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհատաբար կամ վերացած ճանաչելու մասին: Մի դեպքում ՄԳ-ը կարող է անձին գրկել պետության գլխի թեկնածուի կարգավիճակից՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով, իսկ խոչընդոտները վերացած ճանաչելու դեպքում տալ հնարավորություն՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով իրականացնելու իր պահիվ ընտրական իրավունքը: ՀՀ Սահմանադրությանը նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության որոշման և հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման համար ՄԳ-ը դիմելու իրավունք ունի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը: Ինչպես նշում է Հ.Հ. Հակոբյանը, «Միանգամայն ընդունելի է այն, որ այժմ պատգամավորների մեկ հինգերորդը կարող է դիմել սահմանադրական դատարան»¹⁵: Այս կերպ ապահովվում է պաշտպանական փոքրամասնության իրավունքը, և ընդլիմությունը ևս իրավունք է ստանում դիմելու սահմանադրական արդարադատության առյան:

Վ. Մ. Սիրիխան առաջարկում է սահմանադրական դատարանին օժտել պետական իշխանության վերադաս դաշնային մարմինների կամ Պետական Գումայի որոշմամբ՝ պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության ենթարկելու իրավունքով: Ընդ որում, պատասխանատվության հիմք կարող է լինել ոչ միայն հանցագործության կատարման փաստը, այլև պաշտոնատար անձի ցանկացած նահանջը ՌԴ Սահմանադրության, դաշնային օրենքների պահանջներից կամ վերադաս դաշնային մարմինների որոշումներից¹⁵: Իսկ Ն. Բ. Ակուևի կարծիքով, անիրաժեշտ է սահմանադրական դատարանին վե-

րապահել իրավունք՝ պառլամենտի առջև բարձրացնելու նախարարների և այլ պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը՝ վերջիններիս կողմից սահմանադրական օրենսդրության խախտման փաստերի հիման վրա¹⁶։ Սակայն գտնում ենք, որ հակառակը պետք է լինի՝ պառլամենտը, կառավարությունը կամ այլ իրավասու մարմին ՄԳ-ի առջև պետք է բարձրացնի պաշտոնատար անձի արարքի կամ ընդունած որոշման սահմանադրականության հարցը և սահմանադրական արդարադատության մարմնի «վերդիկտի» համաձայն՝ պետք է լուծվի տվյալ սուբյեկտին նեգատիվ սահմանադրական և այլ իրավաբանական պատասխանատվության ենթարկելու խնդիրը։

Հատկանշական է, որ աշխարհում առաջինը հիմնադրվել է Ավստրիայի Սահմա-

նադրական դատարանը, որի հայեցակարգը մշակել են Հ. Կելզենը և Կ. Էյզենմանը։ Եվ հետաքրքիրն այն է, որ համաձայն 1920 թ. ընդունված Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի՝ «Սահմանադրական դատարանը քննում է գործեր այն մեղադրանքների հետ կապված, որոնք հանգեցնում են Գաշնության և Հողերի գերագույն մարմինների սահմանադրական պատասխանատվությանը՝ վերջիններիս կողմից իրենց պաշտոնական գործունեության ընթացքում թույլ տված իրավախախտումների համար»¹⁷։

Այսպիսով, սահմանադրական դատարանը անփոխարինելի դերակատարություն ունի սահմանադրական պատասխանատվության՝ որպես սահմանադրական իրավակարգի ու օրինականության ապահովման անհրաժեշտ գործիքի կիրառման կառուցակարգում։

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Конституционное правосудие в странах СНГ и Балтии. Отв. ред. М. А. Митюков. М., 1998; Schwartz H. The struggle for Constitutional Justice in Post-Communist Europe. Chicago and London, 2000; Harutunian G. G. La Court Constitutionnelle D' Armenie. Les Cahiers du Conseil Constitutionnel. N 20. 2006 (89-91). Paris.

² Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2004: Նույնի՝ Սահմանադրականության գարգիցման արդի միտումները և ժամանակի մարտահրավերները // ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, Հ. 2, 2004: Арутюнян Г. Г. Конституционное правосудие - отражение сути правового государства и конституционализма // Конституционное правосудие. Вестник конференции органов конституционного контроля стран молодого демократии. Ереван, 2005, вып 2(28): Հակոբյան Ռ. Խ. Նկատառումներ «Սահմանադրականության» և «Սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունների վերաբերյալ // Օրենք և իրականություն, Երևան, 2009, N 4, 6, էջ 1-4, 12-13:

³ Այս մասին մանրամասն տե՛ս Арутюнян Г. Г. Конституционный суд в системе государственной власти (сравнительный анализ). Ереван, 1999: Նույնի՝ Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2000: Նույնի՝ Սահմանադրական արդարադատության ներկա վիճակը և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում (համառոտ անդրադարձ, 30.01.2001 թ.), Երևան, 2001: Նույնի՝ Գառապեղյան իշխանություն, Համակարգային գործակալության եզրագծային վարչագրումների փորձից, Երևան, 2002 և այլն:

⁴ Սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Ռ. Խ. Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, Երևան, Իրավունք, 2008, 516 էջ:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2006/32 (487), 21.06.06:

⁶ Այս և հուշորդ ընդգծումները մերն են՝ Ռ. Խ. Հակոբյանի:

⁷ Տե՛ս Հարությունյան «Սահմանադրական դատարանի 2006 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ», Հունվար 2007թ., Երևան, էջ 19-20:

⁸ Տե՛ս ՄԳՈ-509 որոշում, 17.09.2004թ.// www.concourt.am:

⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Navot S. Political Questions in the Court: Is §Judicial self-restraint a better alternative than a §non justiciables approach, Himsworth Ch. Judicial Review of Political questions. Questions of Justiciability // VII World Congress of the International Association of Constitutional Law, Athens, 11-15 June 2007.

¹⁰ Տե՛ս Քաղաքացի Մ. Քոչարյանի և քաղաքացի Հ. Գավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով՝ ՄԳՈ-649 որոշում, 4.10.2006 թ., էջ 17-18:

¹¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Арутюнян Г. Г. Роль конституционных судов в формировании единого правового пространства Европы (доклад на Московском международном форуме: «Единое правовое пространство Европы и практика конституционного правосудия», 26-28 октября 2006 г.) // Право и политика: научный юридический журнал. М., 2006, N 12, С. 5-10: Նույնի՝ Հայաստանը Եվրոպական միասնական իրավական համակարգում // Օրենք և իրականություն, N 2, Երևան, 2007, էջ 1-5:

¹² Անիրաճեշտ է նախատեսել նույն առանձնապես ծանր հանցագործությունները:

¹³ Տե՛ս Հակոբյան Հ. Հ. Փառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 595:

¹⁴ Տե՛ս Ս. Գ. Проблемы правовой ответственности государства, его органов и служащих: Материалы круглого стола. Белгород, 2000. С. 26.

¹⁵ Տե՛ս Проблемы конституционно-правовой ответственности (по материалам конференции) // Вестник Московского университета, Серия II, Право, 2001, N 3, С. 126.

¹⁶ Տե՛ս Маклаков В. В. Конституционный контроль и конституционная юстиция // Конституционное право зарубежных стран. М., 1995; Юшин Ю. А. Модели конституционного правосудия // Сравнительное конституционное право. Отв. ред. В. Г. Чиркин. М., 1996.